ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/06

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Բողոքաբեր՝ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Պատվիրատու՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչ՝ Ա. Խաչատրյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/01» ծածկագրով գնանշման հարցում, հանրային հեռախոսային ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 24.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի հայտը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.01.2020թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 31.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 31.01.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2020թ.-ին:

2. «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն 24.01.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար <<Հանրային հեռախոսային ծառայությունների>> ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև <<ՔրոսսՆեթ>> ՍՊԸ–ն՝ առաջարկելով 10.855.800 ՀՀ դրամ գնային առաջարկ /ընդհանուր գին/ և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի համաձայն՝ «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներին ծանուցել է 17.01.2020թ. գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1 կետի բ. ենթակետի համաձայն՝ բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել <<ՋիէնՍի Ալֆա>> ՓԲԸ-ն առաջարկելով

պայմանագիրն իրականացնել 6.332.000 ՀՀ դրամ գումարով /ներառյալ ԱԱՀ/, որի մասին տեղում ծանոթացել են <<ՔրոսսՆեթ>> ՍՊԸ-ի և <<Ջիթել>> ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

Իսկ արդեն նույն արձանագրության 1 կետի գ. ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<ՋիէնՍի Ալֆա>> ՓԲԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ <<ՔրոսսՆեթ>> ՍՊԸ–ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար <<Հանրային հեռախոսային ծառայությունների>> ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից.

<<ՔրոսսՆեթ>> ՍՊԸ - 10.855.800 ՀՀ դրամ,

<<Ջիթել>> ՍՊԸ – 13.478.400 ՀՀ դրամ,

<<ՋիէնՍի Ալֆա>> ՓԲԸ – 12.960.000 ՀՀ դրամ:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1 կետի բ. ենթակետի համաձայն՝ գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների արդյունքում՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչում <<ՋիէնՍի Ալֆա>> ՓԲԸ-ին /6.332.000 ՀՀ դրամ/:

Gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 21.01.2020թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, որտեղ նշված չէ անգործության ժամկետ, որպեսզի հնարավոր լինի ՀՀ գնումների հետ

կապված բողոքներ քննող անձին ներկայացնել բողոք՝ գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ:

1. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի.

- հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում՝ դրա փոխարժեքը.

- նշում է այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համաձայն՝ «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 5.1 և 5.2 կետերի՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

5.2 - Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընդ որում՝ ա) մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման.

Սակայն մրցույթին հայտ ներկայացրած <<ՋիէՆՍի Ալֆա>> ՓԲԸ-ի գնային առաջարկի, իսկ այնուհետև գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

վերջիններիս կողմից գնային առաջարկով ներկայացրած անգամ արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) պակաս է, քան տվյալ աշխատանքի ինքնարժեքը, ինչը չի կարող ուղղակի գոյություն ունենալ:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և մրցույթի Հրավերի 5.1. կետի պահանջներով՝ պետք է առնվազն մերժեր <<ՋիէնՍի Ալֆա>> ՓԲԸ-ի կողմից գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկը, քանի որ գնային առաջարկով ներկայացրած արժեքի /ինքնարժեքի/ գինը պակաս է հրավերով նախատեսված տվյալ ծառայության նախահաշվով նախատեսված ծառայության ինքնարժեքից:

Հակառակ դեպքում կստացվի, որ «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և մրցույթի Հրավերի 5.1. կետի պահանջների խախտում:

2. Համաձայն՝ «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 8.24 կետի՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

Նույն հրավերի 8.25 կետի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Այս փաստի հետ կապված գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից անհասկանալի և կասկածելի պայմաններում պայմանագիր կնքելու մասին

հայտարարության մեջ չի նշվել անգործության ժամկետ՝ բողոք ներկայացնելու փաստի հետ պայմանավորված:

Ավելին՝ <<ՔրոսսՆեթ>> ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից զանգ է կատարվել Պատվիրատուին, որին ի պատասխան Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ նոր Կարգով անգործության ժամկետ չի սահմանվում, մինչդեռ Ընթացակարգի հրավերի 8.25 կետով նշվել է՝ սնգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է:

Գտնում ենք, որ առնվազն այս մասով նույնպես գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել խախտումներ, քանի որ նույն հրավերի 8.24 կետով հստակ սահմանվում է, որ Պատվիրոտուն պարտավոր է՝ մինչև պայմանագիր կնքելը տեղեկագրում հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, որում պարտադիր պետք է նշվի հայտարարություն՝ անգործության ժամկետի վերաբերյալ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալով պայմանավորված, «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի հայտը:

3. <u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.01.2020թ.-ին գրությամբ դիմել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ հնարավորություն տալով «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից

24.01.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 31.01.2020թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի. «Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է»:

Համաձայն նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի. «Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր»:

«ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով մրցույթին հայտ են ներկայացրել 3 մասնակից, որից կարելի է հետևություն անել, որ 21.01.2020թ-ին Gnumner.am-ում հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը 22.01.2020թ.-ից-26.01.2020թ.-ը ժամանակահատվածում գտնվել է անգործության ժամկետի մեջ՝ իրավունքի ուժով, որը տեխնիկական վրիպակի պատճառով չի նշվել պայմանագիր կնքելու մասին հայտարարության մեջ:

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող այն փաստը, որ պայմանագիր կնքելու մասին հայտարարության մեջ նշված չէ անգործության ժամկետը և դա գնահատող հանձնաժողովի կողմից իրականացվել է կասկածելի պայմաններում՝ բողոք ներկայացնելու փաստի հետ պայմանավորված, ընդունելի չէ, քանի որ մինչ այդ ժամկետի ավարտը պայմանագրի նախագիծ չի ներկայացվել 20.01.2020թ-ի N 4 արձանագրությունով հաղթող ճանաչված «ՋիէնՍի Ալֆա» ՓԲԸ-ին:

Ինչ վերաբերվում է բանակցություններից հետո «ՋիէնՍի Ալֆա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված նվազագույն գնային առաջարկին և համաձայն այդ գնային առաջարկի գնահատող հանձնաժողովի կողմից «ՋիէնՍի Ալֆա» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելուն, տեղեկացնում ենք, որ գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը. «բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով»:

Ինչ վերաբերվում է «ՋիէնՍի Ալֆա» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած ինքնարժեքից ցածր՝ նոր գնային առաջարկ ներկայացնելուն, ապա ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 52-րդ կետի 3-րդ մասի համաձայն

«եթե պայմանագրի գինը կայուն է, ապա պայմանագրի պարտաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակցի կամ պատվիրատուի) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հանրային հեռախոսային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտն են ներկայացրել «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն, «Ջիէնսի-Ալֆա» ՓԲԸ-ն և «Ջիթել» ՍՊԸ-ն:

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Հանրային հեռախոսային ծառայություններ	6 332 550	2 713 950	1 809 300	10 855 800

«Ջիէնսի-Ալֆա» ՓԲԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Հանրային հեռախոսային ծառայություններ	7 900 000	2 900 000	2 160 000	12 960 000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 14.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել ընթացակարգի մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Հանձնաժողովի 20.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 17.01.2020թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին ներկա են գտնվել «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի, «Ջիթել» ՍՊԸ-ի և «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի ներկայացուցիչները: Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրն իրականացնել 6 332 000 /վեց միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար/ ՀՀ դրամ գումարով /ներառյալ ԱԱՀ/, որի մասին տեղում ծանոթացել են «Քրոսսնեթ» ՍՊԸ-ի և «Ջիթել» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ին:

21.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

Հայտարարությամբ անգործության ժամկետի վերաբերյալ նշում չի կատարվել:

Հայտարարության համաձայն՝ «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 5 276 670 ՀՀ դրամ, իսկ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ ՝ 6 125 000 ՀՀ դրամ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է: Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով

հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնման ընթացակարգի քարտուղարը պարտավոր է մինչև պայմանագրի կնքումը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում (www.gnumner.am կայքում) ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, ինչը պարունակում է ամփոփ տեղեկատվություն … անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ գնման այլ ընթացակարգերի համար՝ առնվազն հինգ օրացուցային օր է, ինչը հաշվարկվում է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից: Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հանրային հեռախոսային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն, «Ջիէնսի-Ալֆա» ՓԲԸ-ն և «Ջիթել» ՍՊԸ-ն:

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Հանրային հեռախոսային ծառայություններ	6 332 550	2 713 950	1 809 300	10 855 800

«Ջիէնսի-Ալֆա» ՓԲԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ

թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Հանրային հեռախոսային ծառայություններ	7 900 000	2 900 000	2 160 000	12 960 000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 14.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել ընթացակարգի մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Հանձնաժողովի 20.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 17.01.2020թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին ներկա են գտնվել «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի, «Ջիթել» ՍՊԸ-ի և «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի ներկայացուցիչները: Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրն իրականացնել 6 332 000 /վեց միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար/ ՀՀ դրամ գումարով /ներառյալ ԱԱՀ/, որի մասին տեղում ծանոթացել են «Քրոսսնեթ» ՍՊԸ-ի և «Ջիթել» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ին:

21.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

Հայտարարությամբ անգործության ժամկետի վերաբերյալ նշում չի կատարվել:

Հայտարարության համաձայն՝ «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 5 276 670 ՀՀ դրամ, իսկ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ ՝ 6 125 000 ՀՀ դրամ:

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/01» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 7 900 000 ՀՀ դրամ, իսկ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի մոտ այն կազմել է 6 332 550 ՀՀ դրամ: Սակայն 17.01.2020թ.-ին տեղի ունեցած բանակցությունների արդյունքում վերոնշյալ երկու մասնակիցներն իրենց ներկայացրած գնային առաջարկները նվազեցրել են ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 5 276 670 ՀՀ դրամ, իսկ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ ՝ 6 125 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր մասնակիցների հայտերը՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցները գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունեին նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը պետք է գնահատեր որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժեր մասնակիցների ներկայացրած հայտերը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ 21.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ որում անգործության ժամկետի վերաբերյալ նշում չի կատարվել, ինչի արդյունքում խախտվել է Օրենքի 10-րդ մասի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ

Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու / փոփոխելու / նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-2020/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել «Ջիէնսի Ալֆա» ՓԲԸ-ի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքի պահանջը չի ելնում Օրենքի ու Կարգի դրույթներից: Ներկայացված պահանջի շրջանակներում հայտերի վերագնահատում և դրա հիմքով հայտ ներկայացրած մասնակցի հայտը մերժելու գործընթաց նախատեսված չէ, իսկ Բողոքներ քննող անձը և Հանձնաժողովը որպես պետական մարմիններ ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Այլ կերպ ասած՝ Բողոքներ քննող անձի՝ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով վերապահված լիազորությունները սահմանափակված են՝ Օրենքով կամ Կարգով Հանձնաժողովին ու Պատվիրատուին վերապահված լիազորությունների շրջանակով, որոնց վերլուծությամբ, հարկ եմ համարում փաստել, որ հայտերի վերագնահատման և դրա հիմքով հայտ ներկայացրած մասնակցի հայտը մերժելու իրավասությամբ վերջիններս օժտված չեն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն

հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքով ներկայացված և առկա փաստական հանգամանքները հաստատված ու ապացուցված համարելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված պահանջի բավարարմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/06 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**